



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությանը և օծման արարողություններին ներկա գտնվելու համար, 1945 թվին Սովետական Հայաստան իր եկել Բենարբրիի տաճարի ավագերեց ղոկտոր Հյուլետ Ջոնսոնը: Սկզբից մինչև վերջը ներկա գտնվելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը և օծման արարողություններին, ղոկտոր Հյուլետ Ջոնսոնը միաժամանակ հնարավորություն ունեցավ ծանոթանալու ծաղկող Սովետական Հայաստանի մշակույթային ու տնտեսական վերելքին: Անգլիա վերադառնալուց հետո նա հրապարակել է իր տպավորությունները Սովետական Հայաստանի մասին. ստորև բերում ենք նրա այդ տպավորությունների «Մշակույթային կյանք» խորագիրը կրող Դ գլխից մի հատված, որը վերաբերում է արվեստի ծաղկմանը Սովետական Հայաստանում: Հատվածը արատապում ենք «Վերածնունդ» թերթից:

Ժողովրդական արվեստը, պետության հոգատարության ներքո գտնվող արվեստը, թույլ է տալիս այս գեղարվեստական ժողովրդին վերաբողոքել և իր ազգային նրպաստը բերել համաշխարհային արվեստին: Արմատավորված իր սեփական անցյալի մեջ և թրծված իր սեփական ազգային ավանդություններով, հայ արվեստը մեծ ապագա է խոստանում:

Հայ թատերական արվեստը, ինչպես բոլոր թատերական արվեստները պիտի լինեն, մասնիկն է կազմում մի ամբողջության, ուր ներկայվում են նկարչությունը, դրաման, արձանագործությունը, գրականությունը: Հայաստանի համար թերևս ինքնահատուկ խնդիրը կայանում է նրանում, թե ինչպես պահպանել և զարգացնել ջերմության և գույնի իր բնածին զգացումը— հատկապես գույնի— որը շարունակաբար երևան է եկել նրա երկարատև պատմության ընթացքում:

Մի երկիր, որը զուրկ էր թատրոնից, այժմ պարծենում է իր 28 թատրոններով, որոնցից 8-ը գտնվում են Երևանում, մեկը լինելով շարժուն թատրոն, որի պարտականությունն է տարեկան գննել երկու անգամ հաճախել տարբեր գյուղաքաղաքներ և հարևան հյուսիսները: Հաշվում են, որ տարեկան ավելի քան 1.400.000 հոգի հաճախում են այս ներկայացումներին:

Յուրաքանչյուր թատրոն ունի իր սեփական թատերախումբը, իր սեփական շենքը, իր սեփական բեմանկարները, իր սեփական հանդերձանքն ու սարքը: Հայաստանի 28 թատրոններից 24-ը հայկական են, երկուսը ռուսական, մեկը ադրբեջանական և մեկը քրդական:

Հայ եկեղեցու պարագլուխների ընկերակցությամբ ես ականատես եղա մի թատերա-

խաղի, որը կոչվում էր «Պատվի համար»։ սա բացահայտորեն հին բարոյական դրամա էր, այժմեականացված: (Այնուհետև Հ. Ջոնսոնը տալիս է դրամայի բովանդակությունը, որ բաց ենք թողնում. հՄԲ.):

Աղոթքի և հավատքի անմտությունը, երբ դա միացած չէ համապատասխան մի գործողության հետ, հարստություն փնտռողների նենգությունը, նոր կարգերը՝ ներկայացված անդրանիկ տղայի միջոցով, նրա բարոյական խորը հասկացողությամբ և կառուցելու նրա անձկագին ցանկությամբ, որը միաժամանակ ձուլված է նրա թերահավատությանը դեպի Աստված և որը առաջացել է նրա մեջ իր հոր անմիտ հավատքից, թատերական ողբերգական վերջը և դրա պատճառը— այդ բոլորը ստեղծել են հետաքրքիր և փայլուն մի դրամա:

Ես նույնպես ներկա գտնվեցի ազգային օպերայի հրաշալի մի ներկայացման, որը տեղի ունեցավ օպերայի փառահեղ շենքում: Այդ շենքը կառուցվել է պատերազմից անմիջապես առաջ 31 միլիոն ռուբլի ծախսով, որից 27-ը վճարվել է կառավարության և 4-ը քաղաքի կողմից:

400 գործավորներ կառավարում են օպերան տարեկան 4 միլիոն ռուբլի ծախսով, որը մասամբ վճարվում է պետության և մասամբ մուտքի տոմսերի միջոցով: Թատրոնը և օպերան Երևանում զարգանում են առանց նյութական վախի կամ վտանգի: Այնքան մեծ է ժողովրդի հավատքը հանդես դրամայի մշակույթային արժեքին, որ նույնիսկ պատերազմի տարիների ընթացքում հինգ նոր թատրոններ են ավելացել ընդհանուր գումարի վրա:

Ճոխ ֆիլհարմոնիկ մի նվագախումբ ըզբաղված է ոչ միայն լուրջ դասական երա-

ժըշտության մեջ, այլ և առական, հայկական և օտար թեթև ժողովրդական երգերով և պարերով:

Ֆիլհարմոնիկը մեզ ընձեռեց ժողովրդական երգերի և պարերի մի այլ հիշատակավոր երեկո: Նրբանաղ պարեր՝ կատարված հատկապես ձեռքերի և բազուկների միջոցով: Հյուսիսային ցեղերը պարում են իրանից դեպի ցած, հարավային ցեղերը իրանից դեպի վեր: Մատներ և ձեռքեր, բազուկների, ուսերի և գլխի վայելանքը և շարժումների ձևերն արագությամբ պետք է տեսնել հասկանալու համար, ինչպես և պիտի տեսնել հայ արացի և կանացի տարազների գույնը և ձևերը:

Այրերը գեղեցիկ են, կանաչ հրաշալի: Այրերը — մոտ 20 հոգի — հազել են երկար, դեղնադույն բաճկոններ, որոնք ընկնում են ծունկից ցած և գոտեպնդված են իրանի մոտ: Մի կողմից գույններ շեշտվում են բաճկոնների մեծ, կապույտ թևոցներով, այժմադույն մոյակների մեջ սեղմորեն խոթված կապույտ ու լայն տափառներով և մյուս կողմից կանաչավիղ ու կանաչ թեզանիքե մետաքսյա շապիկներով: Գոտուն մի դաշույն և կրծքին 14 շարք փամփշտակաբներ, յոթը մի կրծքին թեքված դեպի վեր, յոթը մյուս կրծքին թեքված դեպի ցած. ավելացրեք դրան ասպետական և ռազմաշունչ խոյանքը միացած տարազների գունազեղ և կանաչի քրոջովայնը, որը հրաշալիորեն ձուլվում է նրանց պարի թեթև, երանգավոր և համարյա թե կանաչի վայելչության:

Նախանց զգեստները անկարելի է նկարագրել: Գեղեցիկ, զուսպ կտրվածքով, մինչև կրծքին են ընկնող փեշի վայելչու ծփանքով հպուն բաճկոնը լայն շապիկի վրա, ուր համարձակորեն խառնվել են միմյանց բոլոր հակադիր երանգները, այնպիսի մի սանձարձակ և անսխալ ճաշակով, ինչպիսին կարելի է տեսնել միայն պարսկական մանրանկարների վրա: Ծանր ոսկյա ասեղնազարդերը, որ երիզում են նրանց կարճ, սեղմ բաճկոնները, գեղեցկորեն զուգորդվում են նրանց երկու կամ երեք հարկյա ոսկե խուլրերին և ոսկյա գինդերին, որոնք զարդարում են նրանց գլուխը: Քողերը մասամբ ծածկում են նրանց երկար, և՛ հյուսերը: Այս կանաչ ձեմում են թագուհիների պես և քայլում են, իրենց փափկանիքաբան, սեղմ, բարձրակրունկ և խոտրեն ասեղնազործված կոշիկներով, աստվածուհիների նման:

Ոմանք գերազանցորեն գեղեցիկ են. բոլորն էլ նրբորեն քանդակված դիմագծեր ունեն: Ուշիղ հոնական քթով և շրթունքների գեղեցիկ կորույթամբ: Նշելով նրանցից մեկ կին, որը սովորականից ավելի արքայատես

էր, կողքիս նստած երուսաղեմի Պատրիարքին, նա ասաց. — «Այո, դա զուտ հայկական տիպար է և հաճախ գտնվում է լեռնային շրջաններում»:

Պարերից շատերը, որոնց ընկերակցում են ժողովրդական նվագարանները, թաղը, թեթև թմբուկը և սրինգը, ընդհանրապես դանդաղ են, նուրբ և հանդարտ, շնայած նրանք երբեմն փոխվում են արագ շարժումների և ջնշակտուր պտույտների: Ընդհանրապես այդ պարերը դառնում են պարզ գյուղական նույթների շուրջ, ինչպիսին է մանկամարդ հարսի վախը իր սկեսուրից, կամ կույսի խաղը իր սիրեկանի գողացված թաշկինակի հետ, որով նա խուսափում է բռնվել, մինչև որ սղան գրպանից հանում է ավելի գեղեցիկ մի թաշկինակ և այժմ աղջիկն է աղերսում տղային:

Օպերայի վերի հանդիպավայրում կախված է ուշագրավ մի դիմանկար, բացահայտորեն նկարված առաջնակարգ արդի մի նկարչի կողմից, որը ցուցաբերում է նուրբ ներատեսույթուն և վարպետ տեխնիկա: Հարցաքննելով ես իմացա, որ դա ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի վրձինածն է: Հետագայում, օպերայի զբոսասրահում (ֆոյե) ես հանդիպեցի նրան և խոսեցի: Նա գեղեցկադեմ մի ծերունի էր, մանր մազերի թավ զանգվածով և քայլելիս հենվել էր երկու երիտասարդների բազուկներին: Նա 1910-ին կոնդոնում ցուցադրել էր իր նկարները:

Ես խնդրեցի այդ նկարչից, որը գույների շողողման բացահայտ վարպետ էր, նկարել էջմիածնի կաթոլիկոսական արարողությունը իր հիասքանչ և նուրբ գունավորումներով: Նա մտադիր է այդ բանն անել:

Ես ներկա գտնվեցի հայկական արվեստի մի ցուցահանդեսի և ծանոթացա բազմաթիվ նկարիչների հետ, որոնցից ոմանք զարմանալիորեն երիտասարդ էին: Մի արձանագործ բացատրեց ինձ հաճույքով թե ինչպես է նա կարողանում հետևել իր ստեղծագործական սեփական հակումներին: Վստահ չինելով իր եկամուտի վրա, նա կարող է գործել առանց ստիպված լինելու ժամանակ վատնել «թեթև հաջողություններին» վրա:

Խոսելով երիտասարդ արտիստների մասին, ես մի օր տեսա մի պատանի, պատերազմի ընթացքում մաշված զգեստներով, որը կենդանաբանական այգում կանգնել էր և իր տետրակի մեջ գծագրում էր: Ես իրավունք խնդրեցի նրա տետրակը տեսնել, ըստ պատելով որ կհանդիպեմ դպրոցական մի սկսնակի: Մինչդեռ դա շափազանց ձեռնահաս մի աշխատանք էր, որ ուշագիր դիտողը հրմտորեն գծել էր կենդանիների տեսքն ու շարժումները: